ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԳԵՈՐԳԻ ՊՐՎԱՆՈՎԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բուլղարիայի Հանրապետության նախագահ Գեորգի Պրվանովին:

«Մենք ուրախ ենք, որ մեր երկու երկրների միջև ստեղծվել են ջերմ հարաբերություններ: Վստահ ենք, որ միասնաբար պիտի կարողանանք դիմագրավել ներկա կյանքի հրամայականներն ու մարտահրավերները: Մենք մեր շնորհակալությունն ենք հայտնում նաև Ձեզ այն հոգատար վերաբերմունքի համար, որ տածում եք Բուլղարիայում բնակվող մեր ժողովրդի զավակաց նկատմամբ, ովքեր իրենց կարևոր ներդրումն ունեն Բուլղարիայի պետության մեջ՝ որպես արժանավոր և հավատարիմ քաղաքացիներն այդ պետության»,- բարի գալուստ մաղթելով Բուլղարիայի Հանրապետության նախագահին հայոց հոգևոր կենտրոն՝ ասաց Հայոց Հայրապետը:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Հայ Առաքելական Եկեղեցու անցած ուղուն, Եկեղեցի-պետություն հարաբերություններին: Նորին Սրբությունը նախագահին նաև խնդրեց իր եղբայրական ողջույնները փոխանցել Բուլղար Ուղղափառ Եկեղեցու պետ Մաքսիմ Պատրիարքին ու բոլոր հավատացյալներին և անդրադարձավ երկու փարի առաջ Բուլղարիա կատարած իր այցին:

Նախագահ Գեորգի Պրվանովն ուրախությամբ արձանագրեց, որ տարեցտարի ավելի են սերտանում երկու երկրների հարաբերությունները: Անդրադառնալով Եկեղեցի-պետություն հարաբերություններին՝ Գեորգի Պրվանովը շեշտեց հասարակության մեջ քրիստոնեական բարձր արժեքների տարածման անհրաժեշտությունը՝ նշելով, որ բուլղար ժողովուրդը կարողացավ տոկալ և դիմանալ դժվարություններին իր հավատքի և Եկեղեցու շնորհիվ:

Պատվիրակության կազմում էր նաև Բուլղար Ուղղափառ Եկեղեցու Վիդինսկի Դոմետիան միտրոպոլիտը: Միտրոպոլիտը, Բուլղար Եկեղեցու գահակալի և Ս. Սինոդի անդամների ողջույնը փոխանցելով Հայոց Հայրապետին, նշեց, որ իր համար մեծ ուրախություն է լինել Ս. Էջմիածնում և արժանանալ Հայոց Հայրապետի ընդունելությանը: Դոմետիան միտրոպոլիտը կարևորեց երկու Եկեղեցիների միջև ստեղծված ջերմ հարաբերությունները՝ հույս հայտնելով, որ դրանք էլ ավելի պիտի զորանան ու ամրապնդվեն՝ ի շահ երկու քրիստոնյա ժողովուրդների:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը, ՀՀ փրանսպորտի և կապի նախարար Անդրանիկ Մանուկյանը, երկու երկրների դեսպանները, պաշտոնատար այլ անձինք:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԻՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ ՁԵՏԵՂՎԱԾ 1308 Թ. ԽԱՉՔԱՐԻ ՄՈՏ

Հայաստանի Գրչի Ազգային Գրադարան